

ՊՕԷՏ, ԱՍԱՑ

Պօէտ, ասաց վառ կարմրաթուշ
Սիրուն տեսքով մի գեղ կոյս.
«Է՞ր չես երգում սիրոյ անուշ
«Ուրախ երգեր լիայոյս...»

Է՞հ, քուրիկ ջան, էլ չես սիրում
Քո գեղ այտի կարմիր վարդ.
Սիրտս գտաւ քո թոյլ գրկում,
Մաքուր սէրը առանց զարդ...»

Այժմ, քուրիկ, ես երգում եմ
Անգարդ սիրոյ գեղ կրծքին.—
Ա՛խ, այդ սէրը, որ երգում եմ,—
Խեղճութիւնն է լալազին

Չե՛մ որոնում էլ ձեզանում
Կենսաժպիտ վառ վարդեր.
Խեղճի վէ՛րքն եմ ես որոնում,
Տալիս նրանց համբոյրներ...»

Մնաս բարեաւ, քուրիկ սիրուն,
Թէ սիրում ես աներկբայ,—
Ա՛խ, աղօթի՛ր սիրով անհուն
Խաչս տանեմ Գողգոթա...»

Յ. ԽԱՆԼԱՐԵԱՆ